

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Վարչական շրջաններ՝



- Աջափնյակ
- Ավան
- Արաբկիր
- Դավթաշեն
- Էրեբունի
- Կենտրոն
- Մալաթիա-Սեբաստիա
- Նոր Նորք
- Նորք-Մարաշ
- Նուբարաշեն
- Շենգավիթ
- Քանաքեռ-Զեյթուն

Տարածքը	223 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, %	0.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 348.0 հա
այդ թվում՝ վարելահողեր	914.2 հա
Վարչական շրջաններ	12
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեկգրի դրությամբ	1 084.0 հազ. մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ.,%	36.6

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում:

Սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Երևանը Հանրապետության Նախագահի և վարչապետի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում Ազգային ժողովն ու կառավարությունը, Հայաստանի Հանրապետության բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն:

Մայրաքաղաքում գործում են Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2019թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

✓ արդյունաբերություն`	37.3 %
✓ գյուղատնտեսություն`	1.2 %
✓ շինարարություն`	53.2 %
✓ մանրածախ առևտուր`	73.3 %
✓ ծառայություններ`	83.4 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով:

Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ**

	Տարածքը, հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին հազ. մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է	Ընդգրկում է հետևյալ թաղամասերը
Աջափնյակ	2 582	109.8	Դավթաշեն, Արաբկիր, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա	Կոտայքի մարզին	Վահագնի, Սիլիկյան, Անաստասովան, Նորաշեն
Ավան	812	52.9	Արաբկիր, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն	Կոտայքի մարզին	Ավան-Առինջ, Նարեկացի, Հովհաննիսյան, Իսահակյան, Թումանյան բնակելի զանգվածներ, Ադի հանք, Ավան
Արաբկիր	1 325	114.5	Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն	Կոտայքի մարզին	
Դավթաշեն	652	42.5	Արաբկիր , Աջափնյակ	Կոտայքի մարզին	Դավթաշենի 1-4 թաղամասեր
Էրեբունի	4 850	129.3	Կենտրոն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Նուբարաշեն	Կոտայքի և Արարատի մարզերին	Նոր Բուրսանիա, Նոր Արեշ, Արգիշտի, Էրեբունի բնակելի համալիրներ, Սարի թաղ, Մուշավան, Ջրաշեն
Կենտրոն	1 335	125.5	Արաբկիր, Աջափնյակ, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն		Կոնդ, Ջորագյուղ, Այգեստան
Մալաթիա-Սեբաստիա	2 516	139.4	Աջափնյակ, Կենտրոն, Շենգավիթ	Արարատի և Արմավիրի մարզերին	Անդրանիկի թաղամաս, Նոր Սեբաստիա, Նոր Կիլիկիա, Հաղթանակ, Սպանդարյան, Արարատյան զանգված
Նոր Նորք	1 411	133.1	Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն	Կոտայքի մարզին	Նոր Նորքի 1-9 զանգվածներ, Ջրվեժի Բանավան, Մայակ թաղամասեր

	Տարածք, հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին հազ. մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է	Ընդգրկում է հետևյալ թաղամասերը
Նորք-Մարաշ	476	11.6	Կենտրոն, Էրեբունի, Շենգավիթ	Արարատի մարզին	
Նուբարաշեն	1 724	9.9	Էրեբունի, Շենգավիթ	Արարատի մարզին	
Շենգավիթ	4 060	141.2	Կենտրոն, Էրեբունի, Մալաթիա-Մեքաստիա, Նուբարաշեն	Արարատի մարզին	
Քանաքեռ-Զեյթուն	773	74.3	Ավան, Արաբկիր, Կենտրոն, Նոր-Նորք	Կոտայքի մարզին	

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 382	4 618
Օնվաճներ, մարդ	129	62	67
Մահացածներ, մարդ	80	40	40
Ամուսնություններ	61	X	X
Ամուսնալուծություններ	18	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	23.2	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	310	152	158
հանրակրթական	1 194	574	620
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	241	157	84
նախնական մասնագիտական (արհեստագործական)	24	7	17
միջին մասնագիտական	130	71	59
բարձրագույն մասնագիտական	590	326	264
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	48 807
Մարզիկներ, մարդ	170	36	134
Զբաղվածներ, մարդ	2 903	1 371	1 532
նրանցից՝ գիտական հիմնարկներում	38	20	18
նրանցից՝ գիտության դոկտոր	4	1	3
գիտության թեկնածուներ	12	6	6
ուսուցիչներ	76	70	6
բժիշկներ	94
միջին բուժանձնակազմ	80
Գործազուրկներ, մարդ	855	445	410
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 602	996	606
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	126	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	10 789
թատրոն	3 999
համերգ	1 791
թանգարան	19 334
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	138	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	73	X	X
միջին ծանրության	39	X	X
ծանր	24	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: